Արձանագրություն 3

ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11.09.19թ.

ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մասիս Աղայանց /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հովսեփ Գրիգորյան /գնահատող/

Արսեն Բաղդասարյան /գնահատող/

Հարություն Մարտիրոսյան /բացող/

Խաչատուր Գևորգյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Անի Թաշչյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին

(Մ.Աղայանց)

1.1 «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և բավարարում է «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Մ. Աղայանց)

2.1 «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

2.1.1 Բացակայում է հրավերի 2-րդ մասի 3.1 կետի 1) ենթակետով պահանջվող՝ <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը:

2.1.2 Ներկայացված Հավելված 3.2-ում հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների աշխատանքային փորձին վերաբերող ժամանակահատվածը և գործունեության ոլորտն ու կատարած աշխատանքը չեն համապատասխանում հրավերով պահանջվող ժամանակահատվածին, գործունեության ոլորտին և կատարած աշխատանքին:

2.1.3 Ներկայացված թիվ 3.2 Հավելվածում «գործատուի անվանումը» սյունյակով տրված տեղեկատվությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին:

2.1.4 Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների կողմից տրված գրավոր համաձայնագրերը չեն համապատասխանում հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետի գ) պարբերությամբ սահմանված պահանջներին:

2.1.5 Հիմնական աշխատակազմում ներառված Գերասիմ Փոքրիկյանի դիպլոմը և անձնագիրը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Բացակայում է լիցենզիայի ներդիրը

կամ արտոնագիրը, որը կրկին պետք է հաստատված լինի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.1.6 Հիմնական աշխատակազմում ներառված Աղասի Խաչատրյանի դիպլոմը, անձնագիրը և արտոնագիրը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.1.7 Հիմնական աշխատակազմում ներառված Սահակ Փոքրիկյանի դիպլոմը և անձնագիրը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Բացակայում է լիցենզիայի ներդիրը կամ արտոնագիրը, որը կրկին պետք է հաստատված լինի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.1.8 Հիմնական աշխատակազմում ներառված Մանուշ Ստեփանյանի դիպլոմը, անձնագիրը և արտոնագիրը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.1.9 Հիմնական աշխատակազմում ներառված Մարի Սոֆյանի դիպլոմը և անձնագիրը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Բացակայում է լիցենզիայի ներդիրը կամ արտոնագիրը, որը կրկին պետք է հաստատված լինի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Համաշիննախագիծ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ս/թ սեպտեմբերի 18-ին, ժամը՝ 11:00 -ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց ս/թ սեպտեմբերի 18-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Մասիս Աղայանց /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝	Հովսեփ Գրիգորյան /գնահատող/
	Արսեն Բաղդասարյան /գնահատող/
	Հարություն Մարտիրոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Անի Թաշչյան
Բացակայում էր՝	Խաչատուր Գևորգյան /բացող/

5. Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու, հայտը գնահատելու և գնահատման արդյունքների մասին

(Մ. Աղայանց)

5.1 «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և սահմանված կարգով շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

5.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և հայտարարել 1-ին տեղ զբաղեցնող /ընտրված մասնակից/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

5.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

5.4 Ընտրված մասնակիցին, անգործության ժամկետի ավարտից հետո, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Մասիս Աղայանց /նախագահ/

_____ Հովսեփ Գրիգորյան

_____ Արսեն Բաղդասարյան

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Անի Թաշչյան /քարտուղար/